

ԽՈՐՀՐԴԱՆԻԾԸ ՈՐՊԵՍ ԹԱՆԱՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԱՌՏԱՀԱՅՏՁԱՄԻՋՈՑ ԷՂԳԱՐ ԱԼԼԱՆ ՊՈՅԻ «ՀԱՂԹՈՂ ՈՐՊԵ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ*

Արմինե Խաչատրյան
Երևանի պետական համալսարան

Հոդվածը միտված է վերլուծելու թանատաբանական հասկացույթի դրսեւումները եղար Ալլան Պոյի «Հաղթող որդը» բանաստեղծության մեջ:

Հանձարեղ ամերիկացի բանաստեղծի ստեղծագործություններում մահվան թեման յուրահատուկ տեղ է գրավում: Հոդվածում ուսումնամահրվում են հեղինակի անհատական ոճին բնորոշ մի շարք հնչյունական խորհրդանինչեր՝ հնչյունային սինեաթեզիա, ալիտերացիա (բաղաձայնույթ), աստոնան (առձայնույթ), որոնց օգնությամբ արտահայտվում է թանատաբանական հասկացույթը:

Հոդվածագիրը հավաստում է, որ պոեմում տեղ գտած բոլոր խորհրդանիշները և այլաբանությունները բազմիմաստ են, և երեմն ավանդական լինելով հանդերձ՝ դրանք կերպարանափոխվում են հեղինակի երևակայության ու պատկերավոր մտածողության մեջ և ծեռք բերում նոր իմաստներ թանատաբանական հասկացույթ արտահայտելու նպատակով:

Բանալի բառեր. թանատաբանություն, խորհրդանիշ, հասկացույթ, բաղաձայնույթ, առձայնույթ, գուգորդություն, հնչյունային սինեաթեզիա:

Ներածություն

Ե.Ա. Պոյի բանաստեղծական երկերը եզակի գեղարվեստական-գեղագիտական միասնություն են կազմում ռոմանտիզմի շրջանի ամերիկյան գրականության մեջ: Նրա ստեղծագործությունները համաշխարհային գրականություն են մուտք գործել վար խորհրդանշական կերպարներով: Ամերիկացի հանձարեղ բանաստեղծի ստեղծագործություններում յուրահատուկ տեղ է գրավում մահվան թեման: Թանատաբանական (*Թանատոս* – մահվան հունական Աստված) թեման այնքան հաճախ է հեղինակի ստեղծած կերպարներում, որ իր սարսափազդու բնույթով, իր դրսերումների բազմազնությամբ հանդերձ ընթերցողի համար դաշնում է սովորական:

Էղգար Ալլան Պոյի ստեղծագործությունների խորհրդանշայնությունը

Ե.Ա. Պոյի ստեղծագործություններում խորհրդանշները¹ բազմիմաստ են: Դիցաբանական և հեղինակային սյուժեներն ու կերպարները, մնալով որպես խորհրդանշ-հասկացություններ, ընթերցողի մոտ մշտապես վերահմաստավորվելու ցանկություն են առաջացնում, քանի որ այս բոլոր խորհրդանշները արտահայտում են հեղինակի փիլիսոփայական, զգացմունքային և հասկացույթային գաղափարները: Ե. Պոյի ստեղծագործություններում շատ խորհրդանշներ ուղղված են այլաբանական անձնավորումների, որոնք հանդես են գալիս որպես գեղարվեստական արտահայտչականության միջոցներ: Խորհրդանշները և այլա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.11.2016:

բանությունները գեղարվեստական լեզվի և պատկերավորության ընդհանուր համակարգի տարրեր են ե. Պոյի ստեղծագործության մեջ: Լեզվական խորհրդանշների շարքում հարկ է նշել հեղինակի կողմից հնչյունային խորհրդանշների լայն կիրառումը, որոնք արտահայտվում են հնչյունային սինեսթեզիայի, բաղաձայնույթի և առձայնույթի միջոցով: <Ետազոտողի հաճար է. Պոյի խորհրդանշները նպաստում են հեղինակային պատկերավոր-փոխարերական մտածելակերպի որպես ստեղծագործության հասկացույթային հիմքի ընկալմանը:

Թանատարանական հասկացույթի դրսևորումը «Հաղթող որդը» բանաստեղծության մեջ

1843 թվականին ե. Պոն գրել է մի շարք մտահոգիչ, հորետեսական բանաստեղծություններ՝ որպես հետևանք կնոջ՝ Վիրջինիայի ծանր հիվանդության: Նրանց թվում է «Հաղթող որդը» (The Conqueror Worm) բանաստեղծությունը: Սա փիլիստիվայական բանաստեղծություն է՝ հիմնված վերածննդյան փոխարերության՝ խորհրդանշիչ վրա, մասնավորապես՝ մարդու կյանքի՝ որպես թատերական տեսարակի կիրառման վրա, միայն այն տարբերությամբ, որ «Կյանք» կոչված դրամայի հերոսը ե. Պոյի բանաստեղծության մեջ որդն է՝ մահվան խորհրդանշը: Այս խորհրդանշը թանատարանական հասկացույթի խոսքայնացված մասն է:

Թանատարանական հասկացույթը² պատկանում է գոյարանական, համամարդկային հասկացույթների շարքին, քանի որ համաձայն Հայդեգերի³՝ մահերևույթը կարևոր դեր է խաղում գոյի իմաստի հարցում, և այն առկա է մարդկության բոլոր էրնիկ խմբերի աշխարհայացքի մեջ:

Խոսքայնացված թանատարանական հասկացույթը բաղկացած է «գերիասկացույթից»⁴, արտահայտված «մահ» բառով, և «ենթահասկացույթից»՝ արտահայտված բառերի և արտահայտությունների առարկայագաղակարական իմաստներով, ինչպես նաև հոգագոնահատողական և գուգորդական-պատկերավոր լեզվական միջոցներով: Թանատարանական հասկացույթի գուգորդական-պատկերավոր լեզվական միջոցների շարքում անհրաժեշտ է առանձնացնել այնպիսի խորհրդանշեր և այլաբերություններ, ինչպիսիք են, օրինակ՝ պազեժամացույցը, պատամքը, ճոխիրը գանգը և այլն: Թանատարանական հասկացույթը, ինչպես և այլ հասկացույթներ, թափանցելով հեղինակային գեղարվեստական տեքստ, ձեռք է բերում նոր գուգորդություններ, խորհրդանշների պատկերավոր իմաստներ: Այսպիսով, խորհրդանշը՝ որպես թանատարանական հասկացույթի խոսքայնացված մաս, հեղինակային հասկացույթի գուգորդական-պատկերավոր համակարգում դաշնում է նշանակալի միավոր:

Խորհրդանշը գեղարվեստական տեքստում կարող է ձեռք բերել խոտացված կրկնակի սահմանում. դրանք ոչ միայն գաղափարների, բարոյական, գեղագիտական և այլ հասարակական արժեքների արտահայտությունն է, այլև հանձարի խորհուրդը, կոնկրետ հեղինակի ստեղծագործական հոգին:

«Հաղթող որդը» բանաստեղծությունը բաղկացած է հինգ բանաստեղծական տներից, որոնցում այլաբանորեն ներկայացվում է մարդու կյանքի պատմությունը: Գործողությունը, որի ընթացքին հետևում են հրեշտակները, կարծես տեղի է ունենում բեմում: Պոեմի առաջին տունը ներածություն է, որտեղ մասնակցում են գիշերը թատրոնում տեղավորված հրեշտակները:

Երկրորդ և երրորդ տները թատրոնի բեմում տեղի ունեցող իրադարձությունները կամ առաջնային դրամատիկական արժեքները պատճենավոր են գուգորդական մասնակցության համար:

յուններն են: Հանգուցալութումը տեղի է ունենում Որդի՝Հաղթողի մուտքով ու հաղթանակով, որից հետո գործողությունն ավարտվում է:

Պոն, որ հավատում էր պոեզիայի գեղագիտական ուժին, բանաստեղծության հենց սկզբից պատկերում է արցունքներից խեղդվող քողերով ծածկված հրեշտակներին. *bedight in veils, drowned in tears*: Հրեշտակները զուգորդվում են բարու և Աստծո հետ, իսկ նրանց վիշտը ապագա ողբերգության նախանշանն է, քանի որ գլխավոր հերոսը դեռ չի հայտնվել: Այն պահին, երբ Պոյի նկարագրած գործողությունները հասնում են իրենց վերջաբանին, ընթերցողը գիտակցում է, որ այդ անդեմ տիկնիկների ամբողջ զանգվածը – *mimes and puppets* – գլխավոր հերոսի՝ Հաղթող որդի զոհերն են: Այս ողբերգության մեջ Հաղթող որդն իրեն դրսնորում է որպես անողոք հնձվոր, կամ գերանդիկ Պառավ – *Grim Reaper*, կամ աստվածաշնչյան Էդեմի «գայթակղիչ օձ»: Սակայն, ի տարբերություն այլ ողբերգությունների, այստեղ հերոսը չի մահանում, այլ, ընդհակառակը, հաղթանակում է, և հրեշտակները չեն կարողանում ոչ ոքի ոչնչով օգնել, բացի մահացաներին սպալուց:

Բանաստեղծության մեջ բոլոր գործողությունները տեղի են ունենում թատրոնի բեմում: Թատրոնը դարձել է կյանքի ավանդական խորհրդանշիշը շեքսափիրյան «ողջ կյանքը թատրոն է, իսկ մենք՝ դերասաններ» ասույթից հետո: Սակայն այս բեմում կենդանի մարդիկ չկան, կան *տիկնիկներ (puppets, mimes)*, և կա ամբոխ (*crowd*), որոնց կառավարում է *Ուրվականը (Phantom)*, և նրանք ել նման են ուրվականների:

*Lo! 'tis a gala night
Within the lonesome latter years!
An angel throng, winged, bedight
In veils, and drowned in tears,
Sit in a theatre, to see
A play of hopes and fears,
While the orchestra breathes fitfully
The music of the spheres.*

*Mimes, in the form of God on high,
Mutter and mumble low,
And hither and thither fly –
Mere puppets they, who come and go
At bidding of vast formless things
That shift the scenery to and fro,
Flapping from out their Condor wings
Invisible Woe!*

*That motley drama - oh, be sure
It shall not be forgot!
With its Phantom chased for evermore,
By a crowd that seize it not,
Through a circle that ever returneth in
To the self-same spot,
And much of Madness, and more of Sin,
And Horror the soul of the plot.*

Անձնավորված խորհրդանիշները – *Madness, Sin, Horror, Woe* – սաստկացնում են բեմում տիրող սարսափի ու ցավի պատկերը: Այս ողբերգական, մահացու պատկերի համգուցալուծումը 4-րդ տան մեջ է, երբ հայտնվում է գալարվող որդը:

Մարդու հանդեպ Մահի տարած վերջնական հաղթանակը նկարագրված է Վերջին տան մեջ ընկնող վարագույի (*curtain*) ու վիղթորիկ (*storm*) խորհրդանշական պատկերներում.

*The curtain, a funeral pall,
Comes down with the rush of a storm ...*

Բանաստեղծության ռիթմը և հնչյունային ձևավորումը համապատասխանում են բանաստեղծության բովանդակությանը՝ մարդու նկատմամբ դաժան ու անկուշտ թանատոսի հաղթանակին: Բանաստեղծության մեջ պահպանվում է հանգը, որում յուրաքանչյուր ութերորդ տողն ունի ABABCBBC կադապար: Այս կադապարի խստությունը ձևավորում է հստակ կառուցվածք, որը ստեղծում է մեղեղիական ռիթմ: <Եղինակն օգտագործում է բացականչություններ ռիթմը կոտրելով և ստեղծելով անբարեհնչության տպավորություն կյանքի թատրոնի բեմում զարգացող ողբերգության սաստկացման համար: Չորրորդ տան մեջ նկարագրված բեմում տեղի ունեցող իրադարձությունների համգուցալուծումն ուժեղանում է անջատման գժի հոլովական գործառույթի միջոցով, որը, ստեղծելով դադարներ, ընդգծում է բեմում արյունաբրու Որդի հայտնվելու սարսափը.

*But see, amid the mimic rout,
A crawling shape intrude!
A blood-red thing that writhes from out
The scenic solitude!
It writhes! – it writhes! – with mortal pangs
The mimes become its food,
And seraphs sob at vermin fangs
In human gore imbued.
Out- out are the lights- out all!
And, over each quivering form,
The curtain, a funeral pall,
Comes down with the rush of a storm,
While the angels, all pallid and wan,
Uprising, unveiling, affirm
That the play is the tragedy, 'Man,'
And its hero the Conqueror Worm.*

Պոեմին տիտուր հնչերանգ է հաղորդում հնչյունային խորհրդանշայնությունը՝ արտահայտված «տիտուր» [օ] հնչյունի կրկնությամբ – *evermore, form, storm*, – և բաղաձայնույթով – *lonesome latter, mutter and mumble, much – madness – more, scenic – solitude*.

Թանատոսի՝ Կյանքի հանդեպ տարած հաղթանակի այս ողջ ողբերգական պատմությունը ավելի է սաստկանում մակդիրների կիրառման շնորհիվ:

Թանատաբանական հասկացույթն արտահայտված է արտակա իմաստներ արտահայտող – *angels, pangs, tears funeral, pall, gore* միավորներով, ինչպես նաև պատկերավոր զուգորդություններով արտահայտված խորհրդանիշներով – *Worm, Condor, theatre, play, puppets, Phantom* ու փոխաբերություններով – *play of hopes and fears, invisible Woe, Madness, Sin, Horror, Conqueror Worm, curtains, lights out, funeral pall, rush of storm, vermin, fangs*.

Թանատաբանական ներակա իմաստն ունի նաև զունային սիմեպթեզիա (համազգացողություն)` արտահայտված հետևյալ բառերով՝ *wan, pallid, blood-red*. Հեղինակը կիրառում է նաև հնչյունային սիմեպթեզիան՝ թանատաբանական կերպարների պատկերման համար: 3-րդ տան մեջ ընթերցողի մոտ ինչ-որ սարսափելի, արտասովոր բանի ձնշող ու անհանգիստ սպասումը ստեղծվում է տիսուր ու հառաջող [օ] հնչյունի օգնությամբ հետևյալ բառերում՝ *forgot, not, spot, plot*. 4-րդ տան մեջ Որդի հայտնվելու հետ միասին գերակշռում են բախծոտ [ս] և վախեցնող [աս] հնչյունները. *route, intrude, out, solitude, food, imbue*, իսկ 3-րդ տան մեջ՝ է. Պոյի կողմից կիրառվող տողադարձի մեթոդը, որին հեղինակը հատուկ է դիմել՝ կոտրելով բանաստեղծության ռիթմը՝ բեմում ամբոխի անկանոն շարժումները տեսանելի դարձնելու համար է:

Հետաքրքրական է նաև բանաստեղծության վերնագրի մեկնաբանությունը: «Հաղթող որդը» վերնագիրը նրբաբանություն (օքսիմորոն) է, քանի որ որդն ինքնին այնքան աննշան արարած է, որ բնության մեջ այն հաղթող պարզապես չի կարող լինել: Մյուս կողմից «որդը», որպես թանատաբանական հասկացույթի խորհրդանիշ, զուգորդվում է գերեզմանային որդի հետ, որին ենթակա է ամեն բան: Բանաստեղծության վերնագրի մեջ զգացվում է նաև հեղինակի՝ կյանքի ու մահվան հանդեպ ունեցած տիսուր հեզնանքը:

Եզրակացություն

Այսիսով, տվյալ բանաստեղծության մեջ է. Պոյն օգտագործել է զուգորդություններ՝ կապված «օձ-զայթակղիչ» այլաբանության հետ, որին նաև անվանում են «մեծ որդ» և որը, ուղարկվելով սատանայի կողմից, պատժում է մեղավորներին: Պոեմում բոլոր խորհրդանիշները և այլաբանությունները բազմիմաստ են և, երեմնն անզան ավանդական լինելով հանդերձ, դրանք կերպարանափոխվում են հեղինակի երևակայության ու պատկերավոր մտածողության մեջ, ձեռք են բերում նոր իմաստներ՝ արտահայտելով թանատաբանական հասկացույթը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Խորհրդանիշը գիտելիքի բարձրագույն ձևն է, այդ իսկ պատճառով այն վերացական է, պայմանական: Եթե կիրաւենք Ֆ. դե Սոսյուրի տերմինաբանությունը, ապա կստացվի, որ որպես խորհրդանիշ հանդես է գալիս իրականության որևէ տարր, որն արտահայտում է անարտահայտելին»: Թհուկուլու սիմբոլում, նշանում. Մ.: ՄԻԴԳԱՐԴ, 2007, ս. 12.
2. «Հասկացույթը ձանաչողական լեզվաբանության հիմնական կարգն է: Այն ունի ներքին կառուցվածք և արդյունք է անհատի ու հասարակության ձանաչո-

- դական գործունեության, որոնք ունեն այս կամ այն առարկայի կամ երևույթի մասին համակարգված տեղեկություն: Հասկացույթը կարող է խոսքայնացվել լեզվական միջոցների մի ողջ համակարգով, որոնք թույլ են տալիս առանձնացնել ձանաչողական հատկանիշները հասկացույթի մոդելավորման ժամանակ»: Խաչատրյան Ա.Ա. *Вербализация художественного танатологического концепта в идиостиле Эдгара По*. Дисс.канд.фил. наук, Ереван 2013, с.30.
3. Хайдегер, М. (1997) Бытие и время. М.: Ad Marginem, 387с.
 4. Арутюнян, Н.Л. (2007) Понятие “сверхконцепт”. // Vita In Lingua, к юбилею С.Г. Воркачева. Краснодар: Артрум, сс.11-17.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арутюнян, Н.Л. (2007) Понятие “сверхконцепт”. // Vita in Lingua, к юбилею С.Г. Воркачева. Краснодар: Артрум.
2. Прокофьева, Л.П. (2007) Звуково-цветовая ассоциативность: универсальное, национальное, индивидуальное. // Саратов:Изд-во Саратовского медицинского ун-та.
3. Сафронова, И.И. (2004) Эстетические функции пунктуации в поэзии М. Цветаевой. / Автореф. дисс. канд. фил. наук, Ижевск.
4. Хайдегер, М. (1997) Бытие и время. М.: Ad Marginem.
5. Хачатрян А.А. (2013) Вербализация художественного танатологического концепта в идиостиле Эдгара По. / Дисс.канд.фил. наук, Ереван.
6. (2007) Энциклопедия символов, знаков, эмблем. М.: МИДГАРД.
7. Poe, E.A. (1983) *Prose and Poetry*. M.: Raduga Publishers.

Symbol as a Means of Realizing Thanatalogical Concept in the Poem “The Conqueror Worm” by Edgar A. Poe

The aim of the article is to analyze the use of thanatalogical concept in the poem “The Conqueror Worm” by Edgar A. Poe. The theme of death plays a vital role in E.A. Poe poems. Symbols and allegories are represented by the artistic language and imagery of E. A. Poe’s works. It should be noted that among the language symbols the author uses a wide range of sound synesthesia, alliteration and assonance. The analysis of the poem reveals that nearly all the symbols and allegories in the poem are polysemantic, and sometimes even being traditional ones, they are transformed according to the imagination and figurative thinking of the author, acquiring new meanings for realizing the thanatalogical concept.

Символ как средство реализации танатологического концепта в стихотворении Э.А. По “Червь Победитель”

В настоящей статье анализируется использование танатологического концепта в стихотворении Э.А. По “Червь Победитель”. В творчестве гениального американского поэта тема смерти занимает особое место. Символы и аллегории являются элементами более общей системы художественного языка и образности в творчестве Э.По. Среди языковых символов следует отметить широкое употребление автором звуковых символов, выраженных звуковой синестезией, аллитерацией и ассонансом. Анализ стихотворения Э.А. По подтверждает, что все символы и аллегории в произведении полисемантичны и, будучи даже иногда традиционными, трансформируются в воображении и образном мышлении автора и обрастают новыми смыслами для реализации танатологического концепта.